ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 հունիսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

76
(2926)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՀ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

ՀՀ արդարադատության նախարարի նախկին տեղակալ, ՀՀ մարդու իրավունքների նախկին պաշտպան Քրիստինե Գրիգորյանը 2023 թվականի հոկտեմբերի 4-ին նշանակվել է արտաքին հետախուզության ծառայության պետ եւ հայտարարագրել է միանձնյա սեփականությամբ իրեն պատկանող 2 բնակարան բազմաբնակարան շենքում: Բնակարաններից մեկը գտնվում է Արաբկիր վարչական շրջանում եւ ձեռք է բերված 2021 թվականին, 2-րդ բնակարանը ձեռք է բերել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում 2015 թվականին:

Արտաքին հետախուզության ծառայության պետը տրանսպորտային որեւէ միջոց չի հայտարարագրել: Քրիստինե Գրիգորյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 4 մլն 862 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները՝ 1 հազար դոլար եւ 900 հազար դրամ:

Քրիստինե Գրիգորյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 13 մլն 433 հազար դրամ, որից 2 մլն 698 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ արտաքին հետախուզության ծառայությունից, 3 մլն 451 հազար դրամը՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից: Գրիգորյանը եկամուտ է ստացել նաեւ ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 4 մլն 094 հազար դրամ, սակայն Գրիգորյանի կենսագրության որեւէ ժամանակահատվածում նշված չէ, որ նա աշխատել է վարչապետի աշխատակազմում:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցումով դիմեց արտաքին հետախուզության ծառայության պետ Քրիստինե Գրիգորյանին՝ հետաքրքրվելով, թե ինչ պաշտոնի համար է ստացել վարձատրություն վարչապետի աշխատակազմից:

Քրիստինե Գրիգորյանը «Ժողովուրդ» օրաթերթի գրավոր հարցմանն ի պատասխան հայտնեց. «2023 թվականի փետրվարի 14-ից մինչեւ 2023 թվականի հոկտեմբերի 2-ը զբաղեցրել եմ ՀՀ ԱԽ քարտուղարի խորհրդականի պաշտոնը: ՀՀ ԱԽ քարտուղարի գրասենյակը ներառված է ՀՀ վարչապետի աշխատակազմի կառուցվածքում»:

Երկրորդ հարցին. «Ինչո՞ւ կենսագրականում չկա վարչապետի աշխատակազմում աշխատանքի մասին որեւէ տվյալ» Գրիգորյանը պատասխանել է. «2023 թվականի հունվարի 24-ից հետո իմ կողմից հրապարակված միակ կենսագրականը, որը հասանելի է ՀՀ կառավարության կայքում, ներկայացված է շատ ամփոփ տարբերակով, եւ դրանում ներառված չեն մասնագիտական գործունեությանս ընթացքում իմ զբաղեցրած այլ պաշտոններ եւս»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Հանդիպում են ունեցել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանն ու ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը: Հանդիպման վերաբերյալ նախագահականը հաղորդագրություն էր տարածել, որը, մեղմ ասած, արտառոց էր: Ըստ նախագահականի՝ «Մտքեր են փոխանակվել Արտաքին քաղաքականության համար պատասխանատու գերատեսչության եւ նախագահական ինստիտուտի սերտ համագործակցության եւ օրակարգային հարցերի շուրջ միասնական դիրքորոշումների եւ մոտեցումների մշակման կարեւորության վերաբերյալ»: Ուշադրություն դարձրեք ձեւակերպմանը. խոսվում է «սերտ համագործակցության եւ օրակարգային հարցերի շուրջ միասնական դիրքորոշումների եւ մոտեցումների մշակման» մասին: Այսինքն՝ օրակարգային հարցերի շուրջ միասնական դիրքորոշում մշակելու մասին խոսում են նույն երկրի պետական կառավարման երկու տարբեր օղակներ: Հետաքրքիր է, իսկ օրինակ՝ օրակարգային հարցերի շուրջ (իսկ դրանք ենթադրում ենք՝ սահմանազատման թեմաներն են կամ արտաքին հարաբերությունների սպեկտորը) նախագահականն ու ԱԳՆ-ն տարբե՞ր դիրքորոշումներ ունեն: Անհավատալի է: Եվ հետո, սա պետք է աքսիոմատիկ ճշմարտություն լիներ, եւ նախագահականն ու ԱԳՆ-ն, հատկապես օրակարգային հարցերի շուրջ, պետք է այնքան միասնական դիրքորոշում ունենային, որ դրա մասին խոսելը զարմանալի ինչեր. իսկ այս հաղորդագրությունից տպավորություն է, որ, կարծես, գործ ունենք երկու տարբեր պետությունների գերատեսչությունների, կամ միջազգային կառույցների հետ ՀՀ նախագահի հանդիպման մասին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Նոր Նորքի բաժին նռնակով ներխուժման փորձի գործը ավարտական փուլում է: Ավելին, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ գործով կալանավորվածների մեղադրանքները վերաորակվել են ու առավել խիստ մեղադրանքներ են առաջադրվել: Ասել է թե՝ առաջիկայում գործով նախաքննության ավարտ կհայտարարվի ու այն կուղարկվի դատարան: Նշենք, որ երեկ ArmLur.am-ը գրել էր, որ նախաքննական մարմինն օրերս միջնորդություն է ներկայացրել դատարան, որպեսզի դատարանը երկարացնի ՆԳՆ ոստիկանության Նոր Նորքի բաժնի վարչական շենք նռնակով ներխուժած եւ պայթյուն իրականացրած երեք կալանավորների կալանքի ժամկետը: Արդյունքում՝ դատարանը բավարարել է նախաքննական մարմնի միջնորդությունը: Հիշեցնենք, որ մարտի 24-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, 3 զինված քաղաքացի փորձել էին ներխուժել ՆԳՆ ոստիկանության Նոր Նորքի բաժնի վարչական շենք, գործադրել էին նռնակ, ինչի հետեւանքով ներխուժող անձանցից 2 -ը վիրավորվել էին եւ տեղափոխվել բուժհաստատություն: Դեպքի առիթով նախաձեռնվել էր քրեական վարույթ՝ ահաբեկչության հատկանիշներով: Նոր Նորքի ոստիկանության շենք ներխուժած եւ վիրավորում ստացած անձանցից մեկը Արթուր Մովսիսյանն էր, որի որդին՝ Էդգար Մովսիսյանը, զոհվել է 44-օրյա պատերազմում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՔՊ-ական պատգամավորների եւ նախարար Անահիտ Ավանեսյանի միջեւ «սառը պատերազմը» շարունակվում է: ՔՊ-ական պատգամավորներն այլեւս անթաքույց եւ առողջապահական ոլորտը նախկինում ղեկավարող Արսեն Թորոսյանի գլխավորությամբ, արտահայտում են իրենց դժգոհությունն Անահիտ Ավանեսյանից: Ավելին, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ անցնող շաբաթ ՔՊ-ական պատգամավորները ԱԺ-ում բյուջեի կատարողականի քննարկման ժամանակ բավականին սառն են ընդունել ու ճանապարհել Ավանեսյանին՝ ի տարբերություն մյուս նախարարների, որոնց հետ նիստից դուրս նույն իշխանական պատգամավորները շատ ջերմ զրուցել են: Հանձնաժողովի նիստի ժամանակ էլ բավականին սուր հարցեր էին տալիս Ավանեսյանին: Լարվածությունը ՔՊ-ական պատգամավորների եւ նախարարի միջեւ այնքան ակնհայտ է, որ անգամ Ավանեսյանը երեկ՝ կառավարության նիստից հետո, չկարողացավ կտրուկ հերքել դա, ինչպես նախկինում էր անում: Պատասխանելով հարցին՝ ինչո՞վ էր պայմանավորված ԱԺ-ում ՔՊ-ականների քննադատություններն իր եւ իր ղեկավարած նախարարության հասցեին, նախարարն ասել էր. «Մի քիչ հասկանալի չէր, թե ինչն էր խնդիրը, որովհետեւ կառավարությունն իր տված խոստումը՝ ամեն տարի ավելացնելու պետական պատվերի շրջանակը, իրականացնում է, եւ մեր բյուջեի ավելացումն էլ դրա վառ օրինակն է», - փորձել էր արդարանալ Ավանեսյանը եւ վերջում էլ որպես ինքնարդարացում՝ գովեստի խոսքեր հնչեցրել ինքն իր հասցեին, թե՝ ինքը «լավ նախարար է»: Նրա այս խոսքերը «մեմ» էին դարձել հայտնի հումորային սյուժեի երգի նման՝ «ես լավ տղա եմ»:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՏՇԱՃ ՉԵՆ ԼՈՒԾՎՈՒՄ

Սեպտեմբերի 20-ին Արցախի հանձնումից եւ արցախահայության բռնի տեղահանումից հետո 120 հազար մարդ բախվեց բազմաթիվ տնտեսական, սոցիալական, հոգեբանական, մշակութային եւ այլ խնդիրների:

Մի շարք խնդիրների կողքին այսօր «Ժողովուրդ» օրաթերթը առանձնացրել է բռնի տեղահանված արցախահայերի համար առողջական ոլորտում առաջացած խնդիրներից մեկին՝ պրոթեզների փոխհատուցման բացակայությանը:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է արցախից բռնի տեղահանված Սպարտակ Հովսեփյանի հետ:

-Պարոն Հովսեփյան, խնդրում եմ նշել, թե ինչ խնդրի եք բախվել տեղահանությունից հետո, որը լուծել չի ստացվում:

-Խնդիրն այն է, որ տեղափոխվելուց հետո՝ նոյեմբերի սկզբին, կոտրվել է պրոթեզս: Դիմել եմ բազմաթիվ կառույցների, այդ թվում՝ սոցապ նախարարություն, էջմիածնի սոցապ ծառայություն, որտեղից ուղարկել են նախարարություն, նախարարությունից՝ ՊՆ ռազմաբժշկական ապահովման վարչություն, այնտեղից՝ գլխավոր շտաբ, ապա արխիվ եւ հարցը չի լուծվել: Սոցապ նախարարությունից խնդրել եմ ինձ գրավոր փաստաթուղթ տալ այն մասին, որ իմ հարցը չի լուծվում, սակայն ասել են, որ պետք է բնակության վայրում դիմում գրեմ: Դիմում եմ գրել էջմիածնի սոցիալական ապահովման ծառայությունում՝ հաշմանդամության կարգը վերականգնելու եւ պրոթեզ ստանալու համար: Պրոթեզի տրամադրումը ի սկզբանե մերժել են, իսկ հաշմանդամության կարգը վերականգնելու համար ասել են, որ պետք է նորից բժշկական քննություն անցնեմ: Այս դեպքում էլ, սակայն, փաստեր չունեն, որ ես զինվորական եմ, եւ կգրանցեն զուտ որպես քաղաքացիական հաշմանդամության կարգ ունեցող:

Հակառակ ապացույցների բացակայությանը՝ ինչպես իրենք են նշում, հոկտեմբերից վերականգնվել է որպես 2-րդ կարգի հաշմանդամ ստանալիք թոշակս: Նույնիսկ սոցապ նախարարությունում հարցրել եմ. «Եթե ես հաշմանդամ չեմ, ապա ինչպե՞ս է թոշակս վերականգնվել: Ինչի՞ հիման վրա եք ինձ թոշակ տալիս»: Հարցիս ի պատասխան՝ ասել են, որ տեղյակ չեն, իսկ թոշակների դեպքում փոխանցումներն արվում են, քանի որ Արցախից բերվել է թոշակառուների տվյալների բազան: Սակայն, այդպես էլ չկարողացան ասել, թե ինչու համար եմ ես թոշակ ստանում, եթե ապացույց չունեն հաշմանդամության կարգ ունեցող անձանց ցանկերով. իսկ կարգի տրամադրման դեպքում պիտի ապացույց ունենան:

-Չե՞ն հիմնավորում, թե մերժման պատճառը որն է:

-Ասում են, որ թղթերս մոտս չեն, եւ չեն կարող առանց դրա հաշմանդամության կարգս վերականգնել: Պետք է գնամ կրկին ստուգում անցնեմ, որպեսզի հաշմանդամության կարգս վերականգնվի, սակայն արդեն՝ որպես քաղաքացիական կյանքի հետեւանք:

-Այլ կառույցների փորձե՞լ եք դիմել:

-Վերոնշյալ կառույցներից բացի ո՛չ:

-Լինելով այս խնդրի մեջ՝ ի՞նչ եք կարծում նման խնդրի բախվողները շա՞տ են:

-Այո՛, շատերն են բախվել այդ խնդրին, սակայն ոմանք իրենց թղթերը կարողացել են հետները բերել եւ հեշտությամբ վերականգնել են իրենց փաստաթղթերը: Հակառակ դրան՝ նրանց հաշմանդամության կարգը փոխել են այստեղ եւ իջեցրել: Ծանոթներից մեկը Արցախում առաջին կարգի հաշմանդամություն է ունեցել, իսկ այստեղ տվել են երրորդ կարգ: Մեկ այլ ծանոթի, որի երկու ոտքերը կտրված են, երկրորդ կարգ են տվել:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

ԿԱՅՈՒՆ ԸՆՏՐԱՆՔԱՆԳՎԱԾ Է ՁԵՎԱՎՈՐՎԵԼ

ԱՊԱՀՈՎՎՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԹԵՄԱՆԵՐԸ

Առանցքային հանրահավաքը ավելի լավ ձեւակերպում է, քան 20-25 տարի գերիշխած «կրիտիկական զանգվածով» հանրահավաքը: Հանրահավաքը կլինի առանցքային այն դեպքում, եթե նոր առանցքային թեմաներ սկսեն կարեւորել, որոնք ենթադրում են նոր մասնագիտական խմբերի ներգրավում եւ նոր սոցիալական խմբերի ուշադրություն:

Մեր քաղաքական միտքն իսկապես կարծում էր, որ եթե մի օր մի հանրահավաքի դուրս գա «կրիտիկական զանգված», վերջ, իշխանությունը կփոխվի, ու այդպես՝ երկար տարիներ, անկախ նրանից, թե ով էր իշխանությունը եւ ով՝ փոխողը: Բնականաբար ոչինչ չէր ստացվում:

Ես ուզում եմ հավատալ, որ առանցքայինն իր բովանդակությամբ պետք է տարբերվի կրիտիկականից, թեեւ «առանցքայինի» ընկալումներն էլ կարող են տարբեր լինել: Շարժման այս պահի նպատակը լայն կրիտիկական համախմբում ստանալն է, իսկ դա հնարավոր է լինում, եթե բարձրացվում են լայն եւ տարբեր շերտերի հետաքրքրության, կենսական թեմաներ: Պարզ ասած՝ կրիտիկական զանգված ապահովում են առանցքային թեմաները:

Շարժումը շատ կարեւոր ու դժվար փուլ հաղթահարել է՝ ձեւավորել է կայուն նոր ընտրազանգված, ջարդել է իշխանական հակաքարոզչության ամենամեծ ալիքը, թակել է մշտական դիտորդ-զգուշավորտատանվող շերտերի դուռը, որպեսզի այդ դռները բացվեն, շարժումը այս պահից էապես կարեւորի նոր թեմաներ.

1. Սոցիալական արդարություն
2. Վիճահարույց ճանապարհներով հարստացած նախկին եւ ներկա պաշտոնյաների հանրային փոխհատուցման քաղաքակիրթ, ապաքրեական մեխանիզմներ (Հավաքական գիտակցության մեջ այս թեման կա, եւ այն շրջանցել հնարավոր չէ):
3. Աշխատողների իրավունքների պաշտպանություն. թե՛ պետական համակարգում, թե՛ մասնավորում տոտալ խախտումների եւ ճնշումների խնդիրը պետք է լուծվի:
4. Բիզնես միջավայր, շրջիարկի փոփոխություններ. այս իշխանությունը գնում է բիզնես դաշտի էական վատացման ուղղությամբ: Բիզնեսին պետք է տալ ծանրակշիռ երաշխիք, որ երբեւէ չեն կրկնվելու նախկին հարկային-մաքսային բարքերը, պետք է սկսել բաց երկխոսություն բիզնեսի հետ, եւ բիզնեսը կկանգնի շարժման, այն է՝ Հայաստանում խորքային փոփոխությունների կողքին:
5. Վարկային գերություն: Կան տարբերակներ, որոնք առաջարկում են ամենեւին ոչ պոպուլիստական մեխանիզմներ, որով հնարավոր է վերանայել շատերի անարդար վարկային պարտավորությունները, օգնել քաղաքացուն՝ դուրս գալ վարկային ստրկությունից:
6. Թանկություն. Հայաստանում կյանքն ակնհայտ արհեստականորեն թանկ է:
7. Բարոյական տոտալ հանրային ճնշում է պետք իրենց անասունի նման պահող որոշ պաշտոնյաների, քարոզիչների վրա, որոնք չեն պահում մարդկային որեւէ սահման:
8. Եվ այլ, բազմաթիվ զգայուն թեմաներ:

Տատանվողներին, «ես քաղաքականությամբ չեմ զբաղվում», «վախենում եմ ակտիվ լինել, «ի՞նձ ինչ...» ասող խավին կարճաժամկետ փուլում հնարավոր չէ համոզել «զբաղվել քաղաքականությամբ»: Բայց, հնարավոր է եւ պետք է նրան հետաքրքրվել տալ՝ զբաղվելու սեփական խնդիրներով, ու դա կբերի բնական ուժեղ կոնսոլիդացիայի:

Վահե Վովհաննիսյան
Այլընտրանքային նախագծեր խումբ

ՀԱՅ-ՇՎԵԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Շվեդիայի Թագավորության վարչապետ Ուլֆ Կրիստերսոնին՝ Ազգային տոնի առիթով: Ուղերձում ասված է. «Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ եւ Շվեդիայի բարեկամ ժողովրդին Ազգային տոնի առթիվ:

Շվեդիան Հայաստանի վստահելի գործընկերն է, եւ մենք կարեւորում ենք Հայաստանի եւ Շվեդիայի գործընկերային հարաբերությունների շարունակական զարգացումը: Հայաստանը բարձր է գնահատում իր առջեւ ծառացած բազմաթիվ մարտահրավերների հաղթահարման գործում շվեդական կառավարության ցուցաբերած աջակցությունը:

Մեր երկրների միջեւ առկա բարեկամական հարաբերությունների ներկա մակարդակը հնարավորություն է ընձեռում ընդլայնելու մեր փոխգործակցությունը ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարթակներում, այդ թվում՝ Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների առավել խթանման, ինչպես նաեւ Հայաստան-Եվրամիություն կապերի սերտացման համատեքստում:

Լիահույս եմ, որ համատեղ ջանքերով նոր լիցք կհաղորդենք Հայաստանի եւ Շվեդիայի համագործակցությանը՝ նպաստելով երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում առկա ներուժի օգտագործմանը:

Մաղթում եմ Ձեզ եւ Շվեդիայի կառավարությանը՝ հաջողություն եւ նոր ձեռքբերումներ, իսկ բարեկամ շվեդ ժողովրդին՝ խաղաղություն եւ բարգավաճում»:

ՁԵՆՔ ՉԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ

«ԱՄՆ-ն չի աջակցում Մոսկվային եւ Կրեմլին ամերիկյան զենքով հարված հասցնելուն», - այս մասին հայտարարել է ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը:

«Մենք թույլ չենք տալիս հարվածներ հասցնել 200 մղոն (մոտ 320 կմ) հեռավորության վրա Ռուսաստանի խորքում եւ թույլ չենք տալիս հարվածներ հասցնել Մոսկվային, Կրեմլին», - ասել է նա ABC հեռուստաալիքին տված հարցազրույցում:

Լրագրողը Բայդենին հարցրել է, թե արդյոք ամերիկյան արտադրության զենքեր արդեն օգտագործվել են Ռուսաստանի տարիքին հարվածելու համար այն բանից հետո, երբ ԱՄՆ նախագահը Կիեւին թույլ է տվել դրանք օգտագործել Ռուսաստանի կողմից օկուպացված Խարկովի մարզի մոտակայքում:

ԱՄՆ նախագահն ուղիղ պատասխան չի տվել, բայց հասկացել է, որ այդ զենքերը չեն օգտագործվի Ռուսաստանի մայրաքաղաքի կամ Կրեմլի վրա հարձակվելու համար:

ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը շնորհավորական ուղերձ է հղել Շվեդիայի թագավոր Կարլ Գուստավ Տասնվեցերորդին Ազգային տոնի կապակցությամբ:

Ուղերձում մասնավորապես ասվում է. «Հայաստանը բարձր է գնահատում Շվեդիայի հետ փոխադարձ հարգանքի եւ վստահության վրա հիմնված հարաբերությունները եւ հանձնառու է առավել ընդլայնելու ու խորացնելու արդյունավետ համագործակցությունը երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում՝ ի շահ մեր ժողովուրդների»:

ԲԱՔՈՒ ԱՅՑ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՉԷ

Հայաստանի վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը հերքել է ադրբեջանցի քաղաքագետ Ահմեդ Շահիրօղլուի գրառումը, թե Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նոյեմբերին այցելելու է Բաքու՝ մասնակցելու COP29 գագաթնաժողովին:

Նազելի Բաղդասարյանն ադրբեջանցի քաղաքագետի գրառմանն արձագանքել է՝ պատասխանելով լրագրողի հարցին՝ «Ադրբեջանցի քաղաքագետը իր X միկրոբլոգում հայտարարել է, թե ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցելու է Բաքվում կայանալիք COP29 ֆորումին: Հաստատվա՞ծ է արդյոք վարչապետի օրակարգը: Նա կմասնակցի՞ Բաքվում ծրագրված միջազգային այդ կոնֆերանսին»: Բաղդասարյանը ասաց, - «Փորձագետը արտահայտել է իր սուբյեկտիվ ընկալումը, որը վարչապետ Փաշինյանի աշխատանքային օրակարգի հետ ոչ մի կապ չունի: Վարչապետ Փաշինյանի աշխատանքային օրակարգում նման այց չի պլանավորվում»:

Վ. ՊՈՒՏԻՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական ֆորումի շրջանակում միջազգային լրատվական գործակալությունների ղեկավարների հետ հանդիպման ժամանակ ասել է, որ Միացյալ Նահանգներն Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկիին կհանդուրժի եւս մեկ տարի՝ մինչեւ 2025 թվականի գարուն, իսկ հետո կփոխարինի նրան: Պատճառը, ըստ ՌԴ նախագահի, Ուկրաինայի զինված ուժերի մեծ կորուստներն են, գրում է ՏԱՍՍ-ը:

«Կարծում եմ, որ ԱՄՆ վարչակազմը կստիպի Ուկրաինայի ներկայիս ղեկավարությանը կայացնել այս որոշումները՝ իջեցնել մոբիլիզացիոն տարիքը մինչեւ 18 տարեկան, իսկ հետո նրանք պարզապես կազատվեն Զելենսկիից»,- ասել է Պուտինը:

«Սա հեշտ պատմություն չէ, - ասել է նա՝ խոսելով Ուկրաինայում մոբիլիզացիայի տարիքային շեմի իջեցման մասին, - օրենքը պետք է ընդունվի եւ որոշակի քայլեր ձեռնարկվեն: Հիմա 2024 թվականի հունիսն է, այս ամենն անելու համար, ինձ թվում է, պետք է մեկ տարի: Մինչեւ գարուն, մինչեւ առնվազն հաջորդ տարվա սկիզբը նրան (Զելենսկիին) կհանդուրժեն: Երբ նա ամեն ինչ անի, կասեն՝ցտեսություն»:

Նրա խոսքով՝ Ուկրաինայի նախագահի պաշտոնում Արեւմուտքի թեկնածուները մի քանիսն են:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

ՔՊ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի թիմակիցները շարունակում են հարստանալ: Նախկինում տան ու մեքենայի անհասանելի երազանք ունեցողները տուն ու ավտոմեքենա են գնում:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, օրինակ, 2018 թվականին է տուն գնել, իսկ 2022 թվականի ներկայացրած հայտարարագրից տեղեկանում ենք, որ Ազգային ժողովի ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը 2022 թվականին 2017 թվականի արտադրության Toyota մակնիշի ավտոմեքենա է գնել:

Անշարժ գույք Կոնջորյանը ձեռք է բերել 2018 թվականին՝ հեղափոխությունից անմիջապես հետո, Երեւանի Նոր Նորք վարչակ շրջանում:

Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 73 հազար դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով գրեթե կես մլն դրամով:

Կոնջորյանի կանխիկ դրամական միջոցները 2022 թվականի համեմատ 2023 թվականին ավելացել են՝ 1,5 մլն դրամից դառնալով 3 մլն դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները 2023 թվականին կազմել են 9 մլն 950 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից:

Ինչպես նախկինում գրել էինք՝ Հայկ Կոնջորյանի կնոջ եկամուտները «Հայ Փոստ»-ում աշխատելիս ամեն տարի գրեթե կրկնապատկվում են, նույնը կատարվեց նաեւ պատգամավորի ԱԺ-ից ստացվող աշխատավարձի հետ: 2022 թվականի համեմատ 2023 թվականին ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավարի աշխատանքի վարձատրությունն ավելացել է 2 մլն 80 հազար դրամով:

Կասկածելի է՝ ՔՊ խմբակցության աշխատանքի վարձատրության նման բարձրացումների պատճառը:

Կոնջորյանի կինը 2021 թվականին «ՀայՓոստ»-ից ստացել է 6 մլն 812 հազար դրամ, իսկ 2022 թվականին՝ 9 մլն 474 հազար դրամ: Թե ինչպես, ինչի հաշվին է Շուշան Ալեքսանյանի ստացած ամսական մոտ 150 հազար ՀՀ դրամ վարձատրությունը 2 տարի անց դարձել ամսական մոտ 800 հազար դրամ, դժվար է ասել: 2023 թվականին Կոնջորյանի կնոջ աշխատավարձը կրկին բարձրացել է՝ դառնալով 10 մլն 471 հազար դրամ:

Կոնջորյանի կնոջ՝ Շուշան Ալեքսանյանի կանխիկ դրամական միջոցները կազմել են 4 մլն 500 հազար դրամ:

Կոնջորյանը եւ կինը հայտարարագրել են 2018 թվականին ձեռք բերված նույն բնակարանը, սակայն բնակարանի հիփոթեքի մասին մանրամասներ տեսնում ենք միայն կնոջ հայտարարագրում: Այսպիսով, համետեղ սեփականությամբ բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 17 մլն 882 հազար դրամ, որի համար կինը ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացել է 2 մլն 110 հազար դրամ գումար, որը եկամտահարկի վերադարձի օրենքով բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդը վճարելու համար է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ՝ ՇՈՒՇԻՈՒՄ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Արցախի օկուպացված Շուշի քաղաքը կապել է Միջին միջանցքի հետ:

«Ուղիղ մեկ ամսից Շուշա քաղաքում (Շուշի անվան ադրբեջանական արտասանությունը) տեղի կունենա Թյուրքական պետությունների կազմակերպության ոչ պաշտոնական գագաթնաժողովը: Այս հանդիպման հիմնական թեմաները կապված կլինեն տրանսպորտի եւ կլիմայի հետ», - ասել է Ալիեւը Թուրքիայի ԽՍՀ անդամ երկրների խորհրդարանների նախագահների հետ հանդիպմանը, հաղորդում է ԱՊԱ-ն:

Միջին միջանցքի կարեւորությունը նշել է Եվրոպական հանձնաժողովի Արեւելյան հարեւանության եւ Եվրոպական հանձնաժողովի Հարեւանության եւ ընդլայնման գլխավոր տնօրինության Արեւելյան հարեւանության եւ ինստիտուցիոնալ հզորացման գծով տնօրեն Ադրիեն Կիրալին վերջերս Երեւանում կայացած ՎՋԵԲ հանդիպման ժամանակ: Եվրոպացի պաշտոնյան ուղղակիորեն հայտարարել է Եվրոպայի եւ Ասիայի միջեւ առեւտրային ուղիների արագ զարգացման անհրաժեշտության մասին, որոնք կշրջանցեն Ռուսաստանը:

Հայաստանի Սյունիքի մարզով անցնող միջանցքը զգալիորեն կկրճատի Միջին միջանցքի երթուղին: Համեմատելով վերը նշված հանգամանքները՝ եզրակացություն է ծագում, որ տրամաբանական է «միջանցք» պահանջել Սյունիքի հյուսիսային մասով, այլ ոչ թե հարավային (Մեղրի), ինչպես ասվել է մինչ այժմ:

Այսպիսով, պարզվում է, որ նախագծում հիմնական շահագրգռվածությունը Արեւմուտքն է՝ Ռուսաստանի հետ իր անխոնջ պայքարում:

ՀԱՄԵՄԱՏԵԼ Է «ԳՈՐԾԵՐԸ»

«Համեմատեք Ալեն Սիմոնյանի հարսի ու Մարտակերտի քաղաքապետի գործը. Բա քաղբանտարկյալն էլ ո՞նց է լինում»: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է փաստաբան Արսեն Բաբայանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Հիշո՞ւմ եք ՀՀ էկոնոմիկայի նախկին նախարարի, տեղակալի եւ մի շարք այլ անձանց կողմից հայտնի գործը:

Հիշեցնեմ ընդհանուր գծերով. նախարարը, տեղակալը եւ մի խումբ այլ անձինք մեղադրվում են այն բանի համար, որ այդ խմբով խարդախությամբ հափշտակել են 238.418.100 դրամ:

Այդ խմբի անդամներից որեւէ մեկն այս պահին բանտում չէ: Ավելին՝ նախարարի տնային կալանքը (կարծեմ ավարտվել է) ոչ թե դատարանն ինքնուրույն էր կիրառել, այլ քննչականն էր միջնորդել, որ հենց տնային կալանք լինի: Հիմա այդ գործով մի խումբ անձինք ազատ շրջագայում են:

Իսկ հիմա այս գործի հետ համեմատենք Մարտակերտի քաղաքապետի գործը:

Մարտակերտի քաղաքապետ Միշա Գյուրջյանը, որը 65 տարեկան է, բոլոր պատերազմների մասնակից, մեղադրվում է 1.500.000 դրամ արժողությամբ ավտոմեքենան խարդախությամբ հափշտակելու համար: Ի դեպ, հատկանշական է, որ այդ ավտոմեքենան առկա է, շարունակում է ծառայել իր հիմնական նպատակներին, իսկ էկոնոմիկայի նախարարության գործով հափշտակված 238.418.100 դրամը կերել են, չկա:

Հիմա Մարտակերտի քաղաքապետ Միշա Գյուրջյանն այդ շինծու քրեական վարույթով կալանավորված է երկու ամիս ժամկետով: Սա այն դեպքում, երբ այդ 1,5 միլիոն դրամ արժողությամբ ավտոմեքենան որեւէ կերպ չի հափշտակվել, այլ ընդամենը անվանափոխվել է, որպեսզի հնարավոր լինի խուսափել հարյուր հազարների հասնող տուգանքներից:

Եվ նորից՝ ըստ մեղադրանքի.

1) 239 միլիոն դրամ առերեւույթ հափշտակած մարդիկ ազատ շրջագայում են, վայելում են կյանքը,

2) Ընդամենը 1,5 միլիոն դրամ արժողությամբ ավտոմեքենան առերեւույթ հափշտակած՝65 տարեկան եւ բոլոր պատերազմների մասնակից քաղաքապետը, որն Արցախում կորցրել է ամեն բան, գտնվում է բանտում:

Բա քաղբանտարկյալն էլ ո՞նց է լինում»:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՁԱՎԹՄԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐ

ՈՐՔԱՆՈ՞Վ ԿԱՊ ՈՒՆԵՐ ԱՎՏՈՎԹԱՐԸ

Առեղծվածային դեպք էր տեղի ունեցել հունիսի 1-ին Երեւան-Գյումրի ավտոճանապարհին: Այդ օրը վթարից կյանքից զրկված տղամարդը անցնում էր Նիկոլ Փաշինյանի իշխանությունը յուրացնելու գործով:

Shamshyan.com-ը հայտնել էր, որ հունիսի 1-ին ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Արագածոտնի մարզում: Ժամը 06:30-ի սահմաններում Արագածոտնի մարզի բնակիչ 43-ամյա Դավիթ Տերտերյանը իր վարած «Volvo» մակնիշի բեռնատարով Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 49 կմ հատվածում դուրս էր եկել երթեւեկելի գոտուց, բախվել մի քանի բետոնե արգելապատնեշների, շպրտել դրանք եւ կողաշրջվել:

Ինչպես հայտնում է Գ. Շամշյանը, վթարի հետեւանքով վարորդը տեղում մահացել է: Վթարի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ավտոմեքենան բարձված է եղել տուֆ քարով, որը ամբողջությամբ թափվել է, իսկ վարորդի դին դուրս բերելու համար դեպքի վայր պետք է բերվի հատուկ վերամբարձ կռունկ:

Վթարի հետեւանքով մահացածը Դավիթ Տերտերյան էր, որ մեղադրյալի կարգավիճակ ուներ՝ իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու քրեական վարույթի շրջանակում:

2023 թվականի սեպտեմբերի 24-ին ազգային անվտանգության ծառայությունը հայտնել էր, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ու վարութային գործողությունների արդյունքում բացահայտվել է նախնական համաձայնությամբ, խմբի կազմում իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու դեպքի մասին:

Մասնավորապես՝ «Խաչակիրներ ռազմամայրենասիրական» ՀԿ անդամներ՝ Ս.Խ-ն, Կ.Դ-ն, Դ.Տ-ն, որը Դավիթ Տերտերյան էր, Վ. Մ-ն, Մ.Մ-ն, Գ.Ն-ն, Ա.Հ-ն, ինչպես նաեւ Ա.Բ-ն, որը երեւանի նախկին քաղաքպետ Ալբերտ Բազեյանն է, այլ անձինք, ունենալով հակաիշխանական հայացքներ, ՀՀ կառավարության անդամների եւ ղեկավարի նկատմամբ՝ գաղափարական թշնամանք, նախնական համաձայնության գալով միմյանց հետ՝ պայմանավորվածություններ են ձեռք բերել իրենց մոտ պահվող զենք-զինամթերքը, որպես հանցագործության գործիք օգտագործելու միջոցով, կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու եղանակով եւ դրա սպառնալիքով՝ զավթելու իշխանությունը, մասնավորապես՝ Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններին:

Արդյունքում, հանցավոր խմբի անդամներն ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար ձեռք են բերել հեռահաղորդակցության սարքեր, հեռախոսային ու այլ կապը խլացնող սարքեր, հանցանքի կատարումը հեշտացնող միջոցներ եւ գործիքներ, ինչպես նաեւ դիտավորությամբ ստեղծել այլ պայմաններ՝ այդ կերպ նախապատրաստվելով կատարելու նախնական համաձայնությամբ՝ խմբի կազմում իշխանության յուրացում. սակայն, իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել սկսել իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը, այն է՝ նախապատրաստվող առանձնապես ծանր հանցագործությունը բացահայտվել եւ խափանվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

Արդյունքում՝ քրեական վարույթով ձերբակալվել են հանցավոր խմբի ութ անդամներ:

Միեւնույն ժամանակ խուզարկություններ են կատարվել հանցավոր խմբի անդամների բնակության հասցեներում եւ հասարակական կազմակերպություն հանդիսացող աշխատավայրերում, որոնց արդյունքում հայտնաբերվել են հրազեն, զենք, ռազմամթերք, օդաճնշիչ ատրճանակներ, զրահաբաճկոններ, հեռահաղորդակցության սարքեր, համակարգիչներ, տարբեր գրառումներ պարունակող նոթատետրեր, փաստաթղթեր եւ այլն:

Որքանով իշխանությունը յուրացնելու նախապատրաստելու քրեական վարույթով անցնող մեղադրյալ Դավիթ Տերտերյանի մահը կապ ունի վթարի հետ՝ դժվար է ասել. հուսանք՝ կպարզի քննությունը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավապահ մարմինները շարունակում են բացահայտումներ իրականացնել կեղծ վարորդական իրավունքների դեպքերի մասով: Եվ ահա, հերթական դեպքն է բացահայտվել:

Լեւիկ Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, անօրինական գումարներ վաստակելու նպատակով, 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին՝ քննությամբ չպարզված օրը, սոցիալական կայք-էջում ստեղծել է «Պրավա 10 օրում» անվամբ օգտահաշիվը՝ այդ եղանակով վարորդական իրավունքի վկայական տրամադրելու կեղծ պատրվակով անձանցից գումար հափշտակելու նպատակով:

ՈՐԴԻՆ ԾԵԾԵԼ Է ՄՈՐԸ

Արտավազդ Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, առողջության թեթեւ վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ եւ հոգեկան ուժեղ տառապանք է պատճառել իրենից կախվածության մեջ գտնվող մորը՝ կենսաթոշակառու Սեդա Բեգլարի Մանուկյանին, որպիսի գործողություններն արտահայտվել են հետեւյալում: Արտավազդ Լադիկի Մանուկյանը, Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 87-րդ շենքի 557-րդ բնակարանում իր հետ համատեղ բնակվող եւ իրենից կախվածության մեջ գտնվող, կենսաթոշակառու տարեց մորը՝ 1942 թվականին ծնված Սեդա Բեգլարի Մանուկյանին պարբերաբար, քննությամբ չարզված օրերին եւ ժամերին, տարբեր կենցաղային հարցերի շուրջ ծագած վեճերի ընթացքում, բազմաթիվ անգամ հարվածներ է հասցրել մոր մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով ֆիզիկական ուժեղ ցավ եւ մարմնական վնասվածքներ, ինչպես նաեւ մահվանից մոտ 5-7 օրվա վաղեմությամբ սալջարդ վերք՝ ձախ նախաբազկի վերին, միջին երրորդականների հետին մակերեսին, իսկ 2024 թվականի փետրվարի 19-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, հերթական անգամ նշված բնակարանում, անտեսելով տարեց մոր ֆիզիկապես անպաշտպան վիճակը, ձեռքերով հարվածներ է հասցրել վերջինիս՝ պատճառելով առողջության թեթեւ վնասի հատկանիշներ պարունակող փակ գանգուղեղային վնասվածք, սալջարդ, վերքեր՝ գլխի, աջից ծոծրակային շրջանում վնասվածք, ստորին շրթունքի ներսային մակերեսին վնասվածք, արյունազեղումներ գլխին, գլխամաշկի տակ՝ ճակատագագաթային շրջանում, քթին, մեջքին, ստորակնակապճային շրջաններում, վերին շրթունքին, կզակային շրջանում, վերին վերջույթներին, քերծվածք եւ արյունազեղում է գրանցվել՝ ձախից վերին շրթունքին, որոնք չեն առաջացրել ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ եւ 167-րդ հոդվածներով նախատեսված հետեւանքներ, սակայն առաջացրել են առողջության թեթեւ վնաս, ապա տարեց մորն անօգնական վիճակում գցելով հատակին՝ հեռացել է, որի հետեւանքով՝ Սեդա Մանուկյանը սուր կորոնար անբավարարությունից մահացել է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՕԳՆԱԿԱՆԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ

Փաստաբան Էրիկ Ալեքսանյանը երեկ հայտնեց, որ Վերաքննիչ դատարանի դատավոր Լուսինե Ալավերդյանը բավարարել է պաշտպանության կողմի բողոքը եւ Արթուր Սուքոյանի նկատմամբ կիրառել տնային կալանք:

Հիշեցնենք, որ Արթուր Սուքոյանը ԱԺ պատգամավոր Լեւոն Քոչարյանի օգնականն է, որը կալանավորվել էր Civic.am կայքի լրագրողի հետ տեղի ունեցած միջադեպի գործով:

ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նախաքննական մարմինն օրերս միջնորդություն է ներկայացրել դատարան, որպեսզի դատարանը երկարացնի ՆԳՆ ոստիկանության Նոր Նորքի բաժնի վարչական շենք նռնակով ներխուժած եւ պայթյուն իրականացրած երեք կալանավորների կալանքի ժամկետը: Արդյունքում՝ դատարանը բավարարել է նախաքննական մարմնի միջորդությունները:

Հիշեցնենք, որ մարտի 24-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, զինված 3 քաղաքացի փորձել էին ներխուժել ՆԳՆ ոստիկանության Նոր Նորքի բաժնի վարչական շենք, գործադրել էին նռնակ, ինչի հետեւանքով ներխուժող անձանցից 2 հոգի վիրավորվել էին եւ տեղափոխվել բուժհաստատություն:

Ոստիկանության Երեւանի Նոր Նորքի բաժին 3 անձի ներխուժման, սպառնալիքներ հնչեցնելու եւ պայթյուն կատարելու դեպքի առթիվ նախաձեռնվել էր քրեական վարույթ՝ ահաբեկչության հատկանիշներով:

Նոր Նորքի ոստիկանության շենք ներխուժած եւ վիրավորում ստացած անձանցից մեկը Արթուր Մովսիսյանն էր, ում որդին՝ Էդգար Մովսիսյանը, զոհվել է 44-օրյա պատերազմում: Նաեւ հայտնի է, որ Արթուր Մովսիսյանը «Սասնա Ծռեր» համահայկական շարժման Նոր Նորքի գրասենյակի ղեկավարն է, որը կալանքի տակ է:

Մյուս կալանավորվածը Կոտայքի մարզի բնակիչ Ստեփան Հովակիմյանն է, որի հետ ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանը շուրջ 2 ժամ բանակցեց, իսկ ահա, ավելի ուշ դեպքի վայր եկան ԱԱԾ հատուկ ջոկատայինների մարտական խումբը եւ վնասազերծեցին Ստեփան Հովակիմյանին:

Նշենք, որ Հովակիմյանը, մինչեւ նռնակով ոստիկանության Նոր-Նորքի բաժին գնալը, սոցիալական ցանցով եթեր էր մտել եւ հորդորել էր ազատ արձակել «Մարտական եղբայրության» 49 անդամներին, որոնք Ոսկեպար գնացել էին հայրենիքի խնդիրներով մտահոգված: Վերջինս ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանի հետ բանակցությունների ժամանակ պնդում էր, որ ոստիկանությունը չենթարկվի Նիկոլ Փաշինյանի պահանջներին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 4-ից 5-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 114 դեպք, որից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐ՝ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԻՆ ԿԻՑ

Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանցի վարչական ղեկավար Կամո Շահինյանը հայտնեց, որ ինքը, նայելով կադաստրային քարտեզին, կարող է ասել, որ գյուղից 57 կամ 58 անշարժ գույք լինելու է նոր սահմանին կից, որոշ դեպքերում սահմանը մտնելու է Կիրանցի բնակչին պատկանող տարածքի մեջ: Նրան հարցրինք պետության կողմից Կիրանցի բնակիչներին տրվելիք փոխհատուցման մասին: Ղեկավարն ասաց, որ այդ հարցերով չի զբաղվում, կեղծ ու վիրավորական համարեց այն տեղեկությունը, որ ինքը համագյուղացիներին համոզել է պետությունից փոխհատուցում վերցնել: Կիրանցի բնակիչ Մհեր Սիմոնյանը, ում տունն անցնելու է Ադրբեջանին, քանդում է իր տունը: Խանում Թամրազյանը, ում տունը եւս անցնելու է Ադրբեջանին, նույնպես քանդելու է իր տունը: Կիրանցի վարչական ղեկավարն ասաց, որ Կիրանցի խորհրդանիշ արծիվը, որ ապամոնտաժել են, կտեղադրվի միջպետական ավտոճանապարհի եզրին՝ նոր կառուցվող ճանապարհի մուտքի մոտ:

ԱՃԱՐԿՈՒՏՈՎ ՁԳՎՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Իջեւան համայնքի Աճարկուտ գյուղի վարչական ղեկավար Աշոտ Հարությունյանը հայտնեց, որ Կիրանցում սահմանազատումից որոշ տարածքներ, Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Կիրանցի կամուրջն Ադրբեջանից հանձնելուց հետո, Աճարկուտով ձգվող եւ այժմ կառուցվող ճանապարհը չի վնասելու գյուղի բնակիչներին պատկանող ոչ մի տան, պատի, այգու կամ այլ գույքի. նորակառույց ճանապարհն ամբողջությամբ անցնելու է համայնքային տարածքով: Նրա խոսքերով՝ ճանապարհի շինարարության ընթացքում 1979 թվականին կառուցված հենապատ է փոխվելու, որը նույնպես համայնքային տարածքում է: Վարչական ղեկավարը զայրացած էր՝ ճանապարհի շինարարության հետեւանքով աճարկուտցիների կրելիք վնասների մասին մամուլում հրապարակումներից: Ա. Հարությունյանը հայտնեց, որ նոր ճանապարհի նախագծման աշխատանքները 2023թ.-ին են արվել, ճանապարհի շինարարությունն իրականացնում է «Քարավան» ընկերությունը:

մեկ անձից գնումներ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մայիսի 29-ին որոշում է ընդունել՝ հրատապ, մեկ անձից գնում կատարելու: Մարզպետարանի կայքում հրապարակված մարզպետի որոշման մեջ գրված չէ, թե տարվա կեսին հրատապ ի՞նչ են գնել, ինչքա՞ն գումարով, ո՞ւմից; Ահա այսպես՝ «թափանցիկ» է աշխատում Նիկոլ Փաշինյանի հարսանիքի քավոր մարզպետը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄՈՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Հունիսի 6-ին ողջ աշխարհում նշվում է Խորհրդատուների միջազգային օրը, եւ մենք ուրախ ենք հայտնել Հայաստանում անցկացվելիք խորհրդատուների միջազգային CMC համաժողովի եւ տարեկան հավաքի մասին, որը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 7-11: Այս հեղինակավոր միջոցառումը, որը կազմակերպվում է Կառավարման խորհրդատվության Հայաստանի ինստիտուտի (IMC Հայաստան) կողմից, խոստանում է անկյունաքարային լինել համաշխարհային խորհրդատվական եւ զործարար համայնքի համար:

Խորհրդատուների միջազգային օրը, որն առաջին անգամ նշվել է 2005 թվականին, նպատակ ունի ընդգծելու կառավարման խորհրդատուների անգնահատելի ներդրումն ամբողջ աշխարհում: Խորհրդատուների միջազգային օրն այս տարի անցկացվում է «Միտումները վերածելով բիզնեսի» թեմայով՝ կարեւորելով խորհրդատուների առանցքային դերը զարգացող բիզնես էկոհամակարգի ձեւավորման եւ զարգացման գործում:

Կառավարման խորհրդատուները կարեւոր դեր ունեն բիզնեսի համար՝ իրենց անգնահատելի փորձով աջակցելով վերջիններիս արդյունավետության, ռազմավարության եւ կառավարման բարելավմանը, միջազգային դերի մեծացմանը: Ոլորտի հիմնական միտումները ներառում են թվային փոխակերպումը, տվյալների վերլուծությունը, կայունությանն ուղղված գործողությունների պլանը, հեռահար եւ հիբրիդային աշխատանքային մոդելների շեշտադրումը, քանի որ արագ փոփոխվող համաշխարհային շուկայում մրցունակ լինելու համար ընկերությունները մշտապես փնտրում են նորարար լուծումներ եւ խորհրդատուներ, ովքեր կկարողանան օգնել այդ գործընթացներում:

Միջազգային CMC համաժողովը կառավարման խորհրդատուների ամենամյա հավաք է, որը խթանում է միջազգային խորհրդատուների միջեւ գիտելիքների փոխանակմանը, մասնագիտական ցանցի ընդլայնմանը եւ մասնագիտական աճի միջավայրի ստեղծմանը: Այս տարվա համաժողովը կենտրոնանալու է հետեւյալ թեմաների շուրջ՝ խորհրդատվություն, թվայնացում, շրջակա միջավայր-կայունություն, բիզնես միջավայր եւ ներկայանալու է «Թվային հորիզոններ. Միավորելով նորարարությունները կայուն ապագայի համար» խորագրի ներքո: Միջազգային CMC համաժողով 2024 CMC համաժողովը մասնակիցներին առաջարկելու է հարուստ օրակարգ՝ վարպետության դասեր, սեմինարներ եւ փոխգործակցության հնարավորություններ, որոնք կենտրոնացած են «Թվային հորիզոններ. Միավորելով նորարարությունները կայուն ապագայի համար» թեմայի շուրջ:

Օրակարգը ներառելու է բացման միջոցառում, միջազգային CMC համաժողով, հեղինակավոր «Կոնստանտինոս» միջազգային մրցանակաբաշխություն (որը համարվում է խորհրդատվական ոլորտի «Օսկար»), գալա ընթրիք, պատվիրակների եւ հյուրերի համար միջոցառումներ:

Միջազգային CMC ամենամյա համաժողովը կառավարման խորհրդատուների ոլորտի առաջնակարգ միջոցառում է: Այս համաժողովի միջոցով Կառավարման խորհրդատվական ինստիտուտների միջազգային խորհուրդը (ICMCI-International Council of Management Consulting Institutes), նպատակ ունի կապ հաստատելու տարածաշրջանի եւ այլ երկրների խորհրդատուների հետ՝ փոխանակելու առաջատար խորհրդատվական փորձառություններն ու հայեցակարգերը: Համաժողովին մասնակցելու են կառավարման խորհրդատուներ ամենատարբեր ոլորտներից՝ փորձառու մասնագետների կողքին հանդես կգան նաեւ նորեկներ, ոլորտով հետաքրքրված ուսանողներ, մասնագիտական զարգացումը կարեւորող անհատ խորհրդատուներ, խորհրդատվական կորպորատիվներ եւ ղեկավարներ: Միջոցառման օրակարգում նախանշված են տարատեսակ համընթաց հանդիպումներ, որոնք կանցկացվեն ոլորտի առաջատար մասնագետների եւ խորհրդատուների կողմից:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

122 ՄԼՆ ԴՐԱՄ՝ «Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍԱՐԱՀԻՆ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ ԿԳՄՍ նախարարությանը 2024 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցներից կատարվել է վերաբաշխում՝ 122 մլն 993 հազար դրամ գումարի չափով: Գումարը կուղղվի «Արամ Խաչատրյան» համերգասրահի գրասենյակային հատվածի, օժանդակ սենյակների եւ դահլիճի նորոգման աշխատանքների եւ հարակից ծառայությունների ձեռքբերմանը:

Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի ադմինիստրատիվ կազմի համար նախատեսված գրասենյակային հատվածի հիմնանորոգումից հետո (գումարը հատկացվել էր ՀՀ կառավարության 22.12.2022թ.-ի N 2043-Ն որոշմամբ) առկա է նաեւ ՊՈԱԿ-ի ստեղծագործական անձնակազմի համար նախատեսված հին եւ անմխիթար վիճակում գտնվող փորձասենյակների հիմնանորոգման, ինչպես նաեւ համերգասրահը նոր փորձասենյակներով համալրելու անհրաժեշտությունը: Համերգասրահում համերգների եւ մշակութային իրադարձությունների այլընտրանքային վայր ունենալու նպատակով նշված հատվածում նախատեսվում է ունենալ նաեւ փոքր սրահ՝ առանձին մուտքով, ինչը հնարավորություն կընձեռի հետագայում հանդես գալու կամերային, նոր ֆորմատի համերգային եւ կրթական ծրագրերով, թեմատիկ զրույցներով եւ այլն:

Նախատեսվում է նաեւ նորոգել համերգասրահի աստիճանավանդակներից մեկը եւ համերգասրահի ստորգետնյա այն հատվածը, որտեղ իր գործունեությունն է ծավալում Ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոնի «Բարեկամություն» անսամբլը: Այդ տարածքում անհրաժեշտություն կա փորձասենյակների, հանդերձարանների եւ սանհանգույցների նորոգման, ինչպես նաեւ տարածքը նոր ընդարձակ հանդերձարաններով համալրման, ինչը թույլ կտա հետագայում ոչ միայն անվանի արտիստներին, այլեւ երգչախմբերին եւ այլ մեծ կոլեկտիվներին հավուր պատշաճի ապահովել համապատասխան հանդերձարաններով:

Նախատեսվում է նորոգել նաեւ համերգասրահի 1-ին եւ 2-րդ հարկերի ճեմասրահները, ինչպես նաեւ դահլիճում կատարել թատերահարթակի եւ պարտերի ընթացիկ նորոգման եւ ամֆիթատրոնի, թատերահարթակի, աջ ու ձախ օթյակների բազրիքների փափուկ հատվածների նորոգման, բեմի դիմային հատվածի հիմնանորոգման եւ կողային հատվածների երեսպատման աշխատանքներ:

Կատարվելիք աշխատանքների արագ եւ համալիր իրականացումը կարեւոր է ոչ միայն «Արամ Խաչատրյան» համերգասրահի բնականոն գործունեության համար, այլեւ մշակութասեր հասարակությանը լիարժեք, հագեցած եւ պատշաճ մակարդակով ներկայանալու տեսանկյունից:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ԲԻԷՍԹԻ»

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, Աշտարակ ք., Գ. Լուսավորչի փողոց, 15 հասցեում գտնվող 288,55 ք.մ. բնակելի տուն, 5,35 քմ կաթսայատուն, 7,3 քմ թռչնանոց, 0,73 քմ /1,46 խմ/ պարիսպ եւ 0,07678 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 40200000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 24.06.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 24.07.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»-Ը՝ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Գ

«ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊԱԼԱՏՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ» ՓԱՌԱՏՈՆ

«Արդշինբանկը» «Սանկտ Պետերբուրգի պալատները Երեւանում» եզակի միջազգային երաժշտական փառատոնի ֆինանսական գործընկերն է: Այն կանցկացվի ս. թ. հունիսի 16-ից 23-ը:

Փառատոնի ընթացքում մայրաքաղաքի գլխավոր երաժշտական հարթակներում ելույթ կունենան համաշխարհային ճանաչում ունեցող երաժիշտներ Իտալիայից, Ռուսաստանից, ինչպես նաեւ Հայաստանից:

Խոսելով միջոցառման մասին՝ «Արդշինբանկ»-ի Վարչության նախագահ Արտակ Անանյանը նշել է. «Մենք կարեւորում ենք աջակցությունը մշակույթին, դա հասարակության հետ փոխադարձ հաղորդակցության հաստատման եւս մեկ ուղի է «Արդշինբանկ»-ի համար, բացի այդ, հենց մշակույթի շնորհիվ են փոխանցվում մարդկային արժեքները սերնդեսերունդ: Այսպիսով՝ սա նպատակային ներդրում է Հայաստանի ապագայի համար»:

Պատասխանելով այն հարցին, թե ինչու է այս տարի փառատոնն անցկացվում Հայաստանում, միջոցառման գեղարվեստական ղեկավար, անվանի ջութակահար, ՌԴ վաստակավոր արտիստ Մարիա Սաֆարյանցը նշել է. «Ես միշտ ասում եմ, որ մշակույթը նման է ոսկու փոշու, որը հեշտ է տարածել, բայց դժվար է կուտակել: Հայաստանը հագեցած է դրանով, այս երկրի հողն աշխարհին տվել է երգիչների, երաժիշտների եւ կոմպոզիտորների մի ամբողջ սերունդ: Ուստի մեզ համար այս փառատոնը Հայաստանում անցկացնելը մեծ իրադարձություն է եւ մեծ պատիվ: Բացի այդ, Երեւանի եւ Սանկտ Պետերբուրգի միջեւ դեռ վաղուց ջերմ հարաբերություններ են հաստատվել, այդ թվում՝ մշակութային ոլորտում:

Տարիների ընթացքում իրականացվել են տարբեր համատեղ նախագծեր՝ սկսած Երեւանի եւ Սանկտ Պետերբուրգի օրերը նշելու միջոցառումներից ընդհուպ մինչ թատերական հյուրախաղերի անցկացումը: Մենք անհամբեր սպասում ենք դասական երաժշտության սիրահարների հետ մեր հանդիպմանը եւ լիահույս ենք, որ հայ հանդիսատեսը կսիրի մեր փառատոնը, եւ ժամանակի ընթացքում այն կդառնա ավանդական»:

Նշենք, որ փառատոնի հանդիսավոր բացումը տեղի կունենա հունիսի 16-ին, Ջվարթնոցի պատմամշակութային հուշարձանի տարածքում, որտեղ հանդիսատեսն ականատես կլինի վառ երաժշտական եւ պատմական ներկայացման՝ նվիրված Մեծ Հայքի տիրակալ Տիգրան Մեծին: Ներկայացումը ստեղծվել է նեապոլիտանական երաժշտական գրադարանի հետ համագործակցությամբ: Հանդիսատեսը հնարավորություն կունենա վայելելու մեծագույն կոմպոզիտորներ Վիվալդիի, Սկարլատիի, Պերգոլեզիի եւ Պիչինիի օպերաների եզակի երաժշտությունը հայոց թագավորի մասին:

Հունիսի 18-ին Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմում տեղի կունենա մեծ համերգ, որը կմիավորի Ռուսաստանից ժամանած ամենաակնառու վոկալիստների՝ Մեծ, Մարիինսկի եւ Միխայլովսկի, ինչպես նաեւ Ազգային օպերայի եւ բալետի թատրոններից: Համերգը նվիրված է մեծ բաս Ֆյոդոր Շալյապինին:

Փառատոնը կավարտվի հունիսի 23-ին Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում «Հաղթողների գալա» համերգով, որի ընթացքում կհնչեն կինոերաժշտական աշխարհի գլուխգործոցներ՝ միջազգային հեղինակավոր մրցույթների դափնեկիրների կատարմամբ Ռուսաստանից եւ Իտալիայից:

«Սանկտ Պետերբուրգի պալատներ» միջազգային երաժշտական փառատոնը դասական երաժշտության ամենանշանակալի փառատոներից է: Նրա հիմնական առանձնահատկությունը Սանկտ Պետերբուրգի պալատների յուրահատուկ ինտերիերում դասական երաժշտության կենդանի հնչողությունն է: Ավանդույթի համաձայն համերգներին մասնակցում են համաշխարհային բեմի աստղեր եւ լավագույն ռուս կատարողները:

ԲԱՆԿԱՅԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԻԶԻՆԳ՝ ԱՌԱՆՑ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ

«Ակբա Լիզինգի» եւ «Ցեպելին Արմենիայի» համագործակցությամբ ֆերմերներն ու գործարարները այսուհետ հնարավորություն կունենան համալրելու իրենց գյուղտեխնիկայի պարկն ու սարքավորումներն «Ակբա Լիզինգի» միջոցով՝ առանց տոկոսադրույքի:

«Հուշագիր ստորագրեցինք «Ցեպելին Արմենիա» ընկերության հետ եւ պետական ծրագրի շրջանակում տրամադրելու ենք առանց տոկոսադրույքի գյուղտեխնիկա եւ սարքավորումներ: «Ակբա Լիզինգը» ներկայացված է Հայաստանի ամբողջ տարածքում եւ գյուղացիներն ու ֆերմերները, կազմակերպությունները կարող են դիմել եւ ստանալ լիզինգ՝ առանց Երեւան այցելելու», - նշել է Ակբա Լիզինգի գլխավոր տնօրեն Աղասի Գասպարյանը:

«Նորագույն տեխնիկայի համալրումը մեծ կարեւորություն ունի գյուղատնտեսների համար, քանի որ հիմնականում շարունակում են օգտագործել հին սարքավորումներ ու տեխնիկա, որոնք ներկայիս պայմաններում արդյունավետ չեն: Ժամանակն է փոխարինել այդ ամենը արդյունավետ, էներգախնայող ու տնտեսող սարքավորումներով, որը այս ծրագրի կարեւորագույն նպատակներից է», - նշել է «Ցեպելին Արմենիայի» գործածված եւ վարձակալությամբ սարքավորումների եւ մանրածախ վաճառքի ղեկավար Արման Ղազարյանը:

Շուկայի բացարձակ առաջատար «Ակբա Լիզինգը» պետական աջակցության ծրագրի շրջանակում տրամադրում է Հայաստանի գյուղտեխնիկայի շուրջ 60%-ը:

«Ցեպելին Արմենիան» արդեն 20 տարի է, ինչ ներկայացնում է գյուղսարքավորումներ ու տեխնիկական լուծումներ, որոնք «Ակբա Լիզինգի» հետ գործակցության շնորհիվ հասցնում է սպառողներին:

«Ակբա Լիզինգի» 100% բաժնետերն «Ակբա» բանկն է:

ՆՈՐ ԱԿՑԻԱ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԻՑ»

Հունիսի 1-ից մինչեւ օգոստոսի 31-ը «Հայէկոնոմբանկը» հայտարարում է նոր ակցիա AEB Guru եւ AEB Guru Travel քարտերի համար:

Մինչեւ օգոստոսի 31-ը Guru Travel քարտի համար անհրաժեշտ է վճարել տարեկան 10,000 դրամ՝ 15,000-ի փոխարեն, իսկ AEB Guru քարտերի համար գործում է 50% զեղչված սակագին՝ տարեկան ընդամենը 1,000 դրամ թվային եւ 1,500 դրամ ֆիզիկական տարբերակի համար: Իշեցված սակագները ակտուալ են լինելու քարտի օգտագործման 5 տարիների ընթացքում:

AEB Guru քարտերը տալիս են բազմաթիվ առավելություններ.

- 0,5-1% cashback անկանխիկ վճարումների համար
- 4% եկամուտ դրամային հաշվի դրական մնացորդի դիմաց
- վարկային գիծ (ցանկության դեպքում)՝ մինչեւ 51 օր անտոկոս ժամանակահատվածով:

Ինչպես նաեւ մինչեւ հավելյալ ավելի բարձր cashback Հայէկոնոմբանկի գործընկեր կազմակերպություններում, որոնց թվում են Lady Zone Fitness Centre, Adidas խանութ-սրահը, Ran Oil բենզալցակայանների ցանցը, Samurai սուշի-բար ռեստորանը, SIRMED ԲԿ-ն, Esculap դեղատների ցանցը եւ մի շարք այլ կազմակերպություններ:

Իսկ AEB Guru Travel պրեմիում քարտատեսակը ուղղակի անհրաժեշտություն է ճամփորդությունների սիրահարների համար: Տարեկան ընդամենը 10.000 դրամ վճարով, բացի վերոնշյալ հնարավորությունները, դուք կստանաք.

- Անվճար մուտք օդանավակայանների Lounge key (լաունջ քի) բիզնես սրահներ
- Կոնսիերժ՝ 24/7 աջակցություն
- Ուղեբեռի անվճար փաթեթավորում «Զվարթնոց» օդանավակայանում
- Միջազգային ճանապարհորդական ապահովագրություն
- Fast Track ծառայություն՝ օդանավակայաններում անցակետերն ու գրանցումների հերթերը շրջանցելու համար

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԵԿՆԱՐԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ 20-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

Հունիսի 6-ին՝ հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան օրը, մեկնարկում է Խաչատրյանի անվան 20-րդ միջազգային մրցույթը: Այն նպատակ ունի բացահայտելու տաղանդավոր երիտասարդների եւ հանրահռչակելու Արամ Խաչատրյանի արվեստը: Այս տարիների ընթացքում խաչատրյանական մրցույթի շնորհիվ երաժշտական աշխարհին ճանաչելի են դարձել բազմաթիվ երաժիշտներ, որոնք գրավել են լավագույն բեմերն ու հանդես են գալիս ամենահեղինակավոր նվագախմբերի հետ:



Այս տարի մրցույթը կանցկացվի ջութակ մասնագիտական կարգում: Մասնակցության իրավունք են ստացել 13 երկրի 20 ջութակահարներ: Նրանք ներկայացնում են ԱՄՆ-ն, Բելգիան, Գերմանիան, Լիտվան, Լեհաստանը, Ճապոնիան, Չինաստանը, ՌԴ-ն, Նորվեգիան, Ավստրալիան, Ֆրանսիան, Հայաստանը, Պորտուգալիան:

«Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի գործադիր տնօրեն Մարտին Թովմասյանը մրցույթի բացմանը նվիրված մամուլի ասուլիսի ընթացքում ընդգծեց, որ մասնակից 20 երաժիշտներն արդեն իսկ իրենց նվագացանկերում ընդգրկել են Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները, քանի որ դրանք ներառված են մրցույթի պարտադիր ծրագրում: Հիմնադրամի ղեկավարը ներկայացրեց ստուգատեսի ժամանակացույցը, մասնավորապես՝ առաջին փուլը կանցկացվի հունիսի 7-ին եւ 8-ին, երկրորդ փուլը՝ հունիսի 9-ին եւ 10-ին, երրորդ փուլը՝ հունիսի 11-ին եւ 12-ին: Իսկ ահա հունիսի 13-ին կայանալիք գալա համերգի ընթացքում հայտնի կդառնան մրցույթի հաղթողները, եւ տեղի կունենա պարգեւատրման արարողությունը:

Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Սմբատյանն ասուլիսում տեղեկացրեց, որ մրցույթին մասնակցել ցանկացողների թիվը տարեցտարի ավելանում է, ինչը պայմանավորված է ստուգատեսի որակի ու հեղինակության բարձրացման հետ: Նա նաեւ նշեց, որ 8000-ից ավելի երաժիշտ աշխարհի տարբեր բեմերում կատարում է Արամ Խաչատրյանի երաժշտությունը, եւ այստեղ մեծ դեր է կատարում Խաչատրյանի անվան մրցույթը:

20-րդ հոբելյանական մրցույթի գլխավոր աջակիցն է Երեւանի քաղաքապետարանը: Երեւանի քաղաքապետի տեղակալ Լեւոն Հովհաննիսյանը կարեւորեց Երեւանում անցկացվող մշակութային իրադարձությունները: Ըստ նրա՝ այս օրերին Խաչատրյանի երաժշտությունը տասնյակ երիտասարդ ջութակահարների համախմբել է մեր մայրաքաղաքում, եւ մրցույթի շնորհիվ նրանք ծանոթանում են Հայաստանին, Երեւանին, մեր մաշուրթային ժառանգությանը:

ԿԳՄՍ նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ Սվետլանա Սահակյանն իր խոսքում ասաց, որ նախարարության նպատակներից է հայկական կոմպոզիտորական արվեստի հանրահռչակումն աշխարհում, եւ նման միջազգային միջոցառումները նպաստում են այդ նպատակի իրականացմանը: Տիկին Սահակյանի խոսքով՝ ԿԳՄՍ նախարարությունը 20 տարիների ընթացքում եղել է մրցույթի կողքին, եւ համագործակցությունը կազմակերպիչների հետ այս տարիների ընթացքում եղել է արդյունավետ:

Խաչատրյանի անվան 20-րդ մրցույթի ժյուրիի նախագահ Ջոհրաբ Թադեւոսյանը, մրցույթի մասնակիցներին հաջողություններ մաղթելով, խորհուրդ տվեց ելույթ ունենալիս լինել ազատ, չմտածել մրցակցության մասին, այլ գերագույն հաճույք ստանալ իրենց կատարումից: Նա նաեւ նշեց, որ իր համար՝ որպես երաժշտի, շատ կարեւոր է կատարումը եւ այն ուղերձը, որ ելույթի միջոցով երաժիշտը փոխանցում է ունկնդրին. «Մի՛ նվագեք այնպես, ասես վերջին անգամ եք նվագում, լավագույնը դեռ առջեւում է»:

Ասուլիսից անմիջապես հետո տեղի ունեցավ վիճակահանություն, որի միջոցով որոշվեց մրցույթի ընթացքում մասնակիցների ելույթների հաջորդականությունը:

Մրցույթի մասնակիցները, ժյուրիի անդամները այցելեցին նաեւ Կոմիտասի անվան պանթեոն: Նրանք հարգանքի տուրք մատուցեցին Արամ Խաչատրյանի հիշատակին՝ ծաղիկներ խոնարհելով նրա շիրմին:

Երեկոյան արդեն Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա Խաչատրյանի անվան 20-րդ միջազգային մրցույթի բացման գալա համերգը:

«Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի կողմից կազմակերպվող երաժշտական այս ստուգատեսն իր կարեւոր տեղն ունի աշխարհում անցկացվող միջազգային մրցույթների ընտանիքում: Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը 2013 թվականից Ժնեւում հիմնված Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (WFIMC) անդամ է եւ գործում է ֆեդերացիայի սահմանած կանոններով: Խաչատրյանի անվան մրցույթի գլխավոր աջակիցն է Երեւանի քաղաքապետարանը: Մրցույթն ավանդաբար կազմակերպվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԽԱՂԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ 50 ՕՐԻՑ

Հայաստանը 33-րդ ամառային Օլիմպիական խաղերին դեռեւս ունի 12 մասնակից՝ հրաձիգ Էլմիրա Կարապետյանը, բռնցքամարտիկ Դավիթ Չալոյանը, ըմբիշներ Արթուր Ալեքսանյանը, Մալխաս Ամոյանը, Սլավիկ Գալստյանը, Վազգեն Թեւանյանը, Արսեն Հարությունյանը, մարմնամարզիկ Արթուր Դավթյանը, ծանրորդներ Անդրանիկ Կարապետյանը, Գարիկ Կարապետյանը եւ Վարազդատ Լալայանը:

Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերը կկայանան 2024 թվականի հուլիսի 26-ից օգոստոսի 11-ը: Խաղերի բացման արարողությունը կլինի բացառիկ, քանի որ առաջին անգամ է, որ այն անցկացվելու է ոչ թե մարզադաշտում, այլ Ֆրանսիայի սրտում՝ Սեն գետի երկայնքով: Փարիզը Լոնդոնից հետո երկրորդ քաղաքն է, որը երրորդ անգամն է հյուրընկալում Օլիմպիական խաղերը (1900, 1924, 2024): 33-րդ ամառային Օլիմպիական խաղերի բացման արարողությունը խորհրդանշական օր է, քանի որ 1924 թվականին խաղերի փակման արարողությունը կայացել է այդ օրը:

Մասնակից հավաքականները բացման արարողությանը կմասնակցեն նավակներով: Փարիզի Օլիմպիական խաղերում 32 մարզաձեւում կխաղարկվի 329 մեդալ, իսկ մասնակիցների թիվը կգերազանցի 10 հազարը: Այս Խաղերում նոր մարզաձեւ է լինելու բրեյք դանսը: Փարիզի Օլիմպիական խաղերի մի քանի մարզաձեւերի մրցումներ կանցկացվեն Թահիթիում, Նանտում, Լիոնում, Մարսելում, Սենթ-Էթյենում եւ այլն: Այս Խաղերում կաշխատի մոտ 45 հազար կամավոր աշխարհի տարբեր երկրներից:

Փարիզի Խաղերի կազմկոմիտեն ներկայացրել է նաեւ Օլիմպիական խաղերի թալիսմանին՝ մասկոտին: Թալիսմանը, որը ստացել է Ֆրիգ (Phryges) անվանումը, նման է ֆրանսիական գլխարկների եւ ունի կարմիր գույն: Ֆրիգիական գլխարկը համարվում է ֆրանսիական հեղափոխության եւ ազատության խորհրդանիշ:

ԿԳՈՏԵՄԱՐՏԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի անդամները Բուդապեշտում UWW վարկանիշային մրցաշարի են մասնակցում:

Հայաստանի հավաքականի անդամներ Արսեն Հարությունյանը, Վազգեն Թեւանյանն ու Արման Անդրեասյանը դուրս են եկել եզրափակիչ: Ընդ որում, Թեւանյանն ու Անդրեասյանը եզրափակչում կգոտեմարտեն միմյանց հետ: Մեկնարկում տարած հաղթանակից հետո Թեւանյանը կիսաեզրափակչում առավելության է հասել Բոլկվաձեի հետ մրցմանը եւ դուրս եկել եզրափակիչ, իսկ Անդրեասյանը եզրափակիչ է դուրս եկել՝ հաղթելով Կեմերտելիձեին:

Մեկնարկում տարած հաղթանակից հետո Արսեն Հարությունյանը 7:3 հաշվով առավելության է հասել իրանցի Խոսրավիին եւ դուրս եկել եզրափակիչ, որտեղ կմրցի ղրղզ Ժումաշբկովի հետ:

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

«ԳՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ» ՃԱՄԲԱՐ

Խնկո Ամոր անվան ազգային մանկական գրադարանում հունիսի 3-ից մեկնարկել է «Գրքերի աշխարհում» խորագիրը կրող կրթամշակութային ամառային ճամբարը: Այն կգործի ամռան երեք ամիսներին, երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 10:00-17:00-ը:

Ամառային ճամբարը նախատեսված է 6-12 տարեկան երեխաների համար: Երեխաները կմասնակցեն ինտերակտիվ, հետաքրքրաշարժ եւ ժամանցային դասընթացների՝ հնարավորություն ստանալով ամառային արձակուրդներն անցկացնել առավել հետաքրքիր եւ հագեցած, ձեռք բերել գիտելիքներ, հմտություններ եւ նոր ընկերներ:

Ամառային ճամբարի օրերին երեխաները գրադարանում կմասնակցեն գրքերի ընթերցումների, քննարկումների, կդիտեն մուլտֆիլմեր եւ կունկնդրեն հեքիաթապատումներ, կծանոթանան աշխարհի տարբեր երկրների տեսարժան վայրերին ու մշակութային ժառանգությանը:

Երեխաների համար կկազմակերպվեն նկարչության, շախմատի, ասեղնագործության դասեր, անգլերեն ու ռուսերեն ինտերակտիվ պարապմունքներ, ցանկության դեպքում հնարավորություն կունենան կատարել դպրոցական հանձնարարությունները:

Ծրագրի շրջանակում կկազմակերվեն նաեւ ճանաչողական այցեր եւ էքսկուրսիաներ Երեւանի կրթամշակութային հաստատություններ, թատրոններ եւ թանգարաններ:

● *Հունիսի 8-ին՝ ժամը 19:30-ին, Բոհեմ թատրոնում տեղի կունենա Ռաֆայել Երանոսյանի՝ «Փահլեւան» մոնոներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որ դիմորդներն արտոնություններից օգտվելու հնարավորություն ունեն:

Հրանուշ Կիրակոսյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ՝

1) Քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են՝

ա. ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,

բ. ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները:

2) Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

ա. 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք եւ մինչեւ 18 տարեկան հաշմանդամ երեխաները,

բ. առանց ծնողական խնամքի մնացած մինչեւ 23 տարեկան երեխաները:

3) Մրցութային հավասար միավորների դեպքում առավելություն է տրվում մարտական հերթապահություն իրականացնող, զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած եւ ծառայության դրական ցուցանիշներ ունեցող դիմորդին:

4) Առանց ընդունելության քննության ՀՀ կառավարության կողմից հատկացված պահուստային տեղերի հաշվին բուհ են ընդունվում միջնակարգ դպրոցի հանրակրթական առարկաների գծով միջազգային օլիմպիադաների հաղթողները, տարբեր մարզաձեւերի գծով աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրները, որոնք ընդունելության դիմում-հայտում հայտագրել են համապատասխան մասնագիտությունները:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում անվճար ուսուցմամբ ընդունվում են ընդհանուր մրցույթից դուրս՝ ըստ մասնագիտությունների՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված տեղերի:

ԱՊԱՍՏԱՐԱՆ

ՀԱՐՑ. Մեկ անգամ ապաստարան ստանալու հայց ներկայացրել եմ, բայց սխալ կա մեջը. կարո՞ղ եմ էլի ներկայացնել:

Նարբե Աբրահամյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստանի դիմումի վերջնական (ներառյալ դատական կարգով) մերժումից հետո կարող եք կրկին դիմում ներկայացնել Միգրացիոն ծառայություն՝ Հայաստանում ապաստան ստանալու համար, եթե՝

- առաջացել են նոր հանգամանքներ, որոնք նախկին դիմումի քննության ժամանակ չեն եղել,
- Դուք ունեք նոր ապացույցներ, որոնք նախկին դիմումի քննարկման ժամանակ չեք կարողացել ներկայացնել:

ՄԱԿ ՓԳՀ Հայաստան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նոր դիմումի քննարկման ժամանակահատվածում Դուք ունեք ապաստան հայցող անձանց համար սահմանված նույն իրավունքները եւ պարտականությունները, որոնք ունեիք Ձեր առաջին դիմումի քննարկման ընթացքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Կապան քաղաքի մարզադաշտը եւ որոշ տարածքներ ճանաչվեցին հանրության գերակա շահ:

Մարզադաշտը կհամապատասխանեցվի միջազգային չափանիշներին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+8 +12	+22 +26
Կոտայքի լեռներ	+8 +12	+23 +26
Կոտայքի նախալեռներ	+15 +17	+28 +30
Գեղարքունիք	+10 +13	+21 +24
Լոռի	+9 +13	+24 +27
Տավուշ	+15 +17	+28 +31
Արագածոտնի լեռներ	+9 +13	+21 +24
Արագածոտնի նախալեռներ	+15 +18	+28 +31
Արարատ	+16 +18	+31 +33
Արմավիր	+16 +18	+31 +33
Վայոց ձորի լեռներ	+8 +11	+22 +24
Վայոց ձորի նախալեռներ	+16 +18	+31 +33
Սյունիքի հովիտներ	+18 +22	+29 +32
Սյունիքի նախալեռներ	+13 +15	+25 +28
ԼՂՀ	+13 +14	+25 +26
Երեւան	+23 +25	+29 +31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*